ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ. Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին. *Երևան, «Զանգակ – 97» հրատ., 2003, 544 էջ:*

Աշոտ Մելքոնյանի «Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին» աշխատությունը նվիրված է հայ պատմագրության սակավ ուսումնասիրված, բայց մեծ կարևորություն ներկայացնող բնագավառներից մեկին՝ Հյուսիսային Հայաստանի պատմական ժողովրդագրության խնդիրներին, որոնք, պայմանավորված ներկա ժամանակաշրջանում տարածաշրջանային նոր զարգացումներով, զուտ գիտական նշանակությունից բացի, ձեռք են բերում նաև քաղաքական, գործնական և այժմեական հնչեղություն: Մելքոնյանը միանգամայն իրավացի է, երբ գտնում է, որ աշխարհաքաղաքական միանգամայն նոր պայմաններում, երկու հարևան երկրների՝ Հայաստանի ու Վրաստանի անկախության կայացման ու ամրապնդման իրավիճակում պատմական ճշմարտության լիակատար բացահայտումը դառնում է կենսական անհրաժեշտություն: Այդ տեսակետից կարևոր է հստակորեն տարբերակել ճշմարտացի պատմությունը ներկա քաղաքական հիմնախնդիրների և հայ-վրացական համակողմանի համագործակցության այսօրվա հրամայականից: Պատահական չէ, որ քննադատելով վրաց պատմագրության մեջ խնդրի վերաբերյալ առկա պատմագիտական խեղաթյուրումները, Ա. Մելքոնյանը չի մոռացել կարևորել հայ և վրաց ժողովուրդների ընդհանրական ու կենսական շահերը ամեն ինչից վեր դասելու անհրաժեշտությունը, երկու հարևան ազգերի բարեկամության պահպանման հրամայականի ընդգծումը:

Պատմական ժողովրդագրությունը պատմագիտության այն կարևոր ասպարեզն է, որը կապելով անցյալը ներկայի հետ, հնարավորություն է տալիս առարկայորեն և շոշափելի կերպով տեսնել էթնիկական այն ընթացքները, որոնք հաճախ հետևանք էին նաև քաղաքական զարգացումների:

Ա. Մելքոնյանի մենագրությունն ընդգրկում է քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, Հայ առաքելական եկեղեցու պատմության, Հյուսիսային Հայաստանի երկրագիտության և քարտեզագրության, մշակութաբանության, վիճակագրության բնագավառներն՝ իրենց ամբողջության մեջ: Եվ դրանում էլ կայանում է գիտական նորույթը, քանզի տեսականորեն ամփոփելով խնդրո առարկա հսկայածավալ նյութը, հետազոտողը գիտական շրջանառության մեջ է դրել հայեցակարգային նշանակություն ունեցող այնպիսի դրույթներ, որոնք ոչ միայն հարստացնում են հայ պատմագիտական միտքը, այլև ուղեցույց կարող են լինել քաղաքագետների, ռազմավարությամբ զբաղվող մեր պետական, քաղաքական գործիչների համար:

Աշխատությունը բաղկացած է չորս գլխից, ներածությունից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից: Արդեն իսկ ներածությունում հեղինակը հստակորեն ձևակերպել է իր առջև դրված խնդիրը: Մենագրական հետազոտություն կատարել մեկ գավառի՝ Ջավախքի ամբողջական պատմությունը ստեղծելու նպատակով: Ուսումնասիրության ճշգրտության որակական բարձր աստիճանը ապահովվել է ժողովրդագրական մեթոդների կիրառմամբ, որոնց հավաստիությունն ապահովված է աղբյուրագիտական հարուստ հենքի առկայությամբ, պատմական երկերի ու պատմագիտական գրականության քննական վերլուծությամբ:

Առաջին գլուխը նվիրված է Ջավախքի հին և միջին դարերի պատմությանը: Հեղինակը իրավացիորեն փաստարկել է, որ խնդրո առարկա դարաշրջանի շատ հիմնահարցերի լուսաբանումը դառնում է գրեթե անհնարին առանց տարածաշրջանի, նա-

խորդ դարաշրջանի, թեկուզև ուրվագծային պատմության ուսումնասիրության:

Գուգարքի և հատկապես Ջավախքի պատմական աշխարհագրության խորը իմացությունը հեղինակին հնարավորություն է տվել ուրվագծել ուսումնասիրվող երկրամասի պատմաաշխարհագրական միջավայրը, ինչը կարևոր է հիմնահարցը ամբողջության մեջ լուսաբանելու համար: Նա չի խուսափում քննվող հարցերի շուրջ եղած բանավեճային մեկնաբանությունների համադրումից և իր գնահատականներն է տալիս՝ ելնելով հայագիտության մեթոդաբանությունից: Խոսելով «Ջավախք» անվան ստուգաբանության մասին հայտնված տարաբնույթ կարծիքների մասին՝ հեղինակը հնագիտական տվյալների և սեպագիր սկզբնաղբյուրների տեղեկությունների հիման վրա ուսումնասիրվող երկրամասը դիտել է որպես հայկական մշակութային գոտուն պատկանող տարածաշրջան և եզրակացրել, որ նախքան մ.թ.ա. VIII դ. Զաբախա-Ջավախքը եղել է հայ էթնոսով բնակեցված տարածք: Մելքոնյանը կարևոր ճշտում է կատարել Հովհաննես Դրասխանակերտցու և Ստեփանոս Օրբելյանի հաղորդումների կապակցությամբ և նշել, որ մաքենացի վանականների տեղաշարժի առնչությամբ հիշատակվող Զրեսկ հոգևոր կենտրոնը ոչ թե Շիրակում էր, այլ Ջավախքում:

Քննելով «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարում» թվարկված գավառներն իրենց բնակավայրերով, ընտանիքների թվաքանակով, նրանց ծուխերի նահապետների անվանացանկերով, Մելքոնյանը հանգում է կարևոր եզրակացության՝ թուրքական տիրապետության հաստատման սկզբնաշրջանում՝ XVI դ. վերջին Ջավախքն ու շրջակա գավառները բնակեցված էին հայ էթնոսով, իսկ թուրքալեզու տարրեր առհասարակ չկային: Պատմական սկզբնաղբյուրների և արխիվային փաստաթղթերի վերլուծմամբ ցույց է տրվել, որ թուրքական վարչաժողովրդագրական քաղաքականությունը, պայմանավորված մահմեդական վերնախավի ազգային-քաղաքական և տնտեսական շահերով, միտված էր երկրամասի հայեցի էթնիկ պատկերի արմատական փոփոխմանը, որի արդյունքում, ի թիվս արևմտահայ այլ նահանգների, Ախալցխայի էյալեթը ևս դարձավ մահմեդաբնակ, այսպես կոչված «մեսխեթցի» թուրքերով բնակեցված: Ընդ որում, հեղինակն ընդգծում է, որ «մեսխեթցի» աշխարհագրական անունով հանդես եկող այդ բնակչությունը սերում էր ոչ միայն քարթվելական բնակչությունից, ինչպես ընդունված է վրաց պատմագրության մեջ, այլ նաև՝ հայերից:

Ա.Մելքոնյանի աշխատության արժանիքներից մեկն էլ այն է, որ հիմնավոր փաստերով հերքվում է վրաց պատմագրության մեջ առկա այն մոտեցումը, ըստ որի Ջավախքը, իմա՝ Ջավախեթիան, որևէ առնչություն չունի հայ իրականության հետ և, իբր, հայեցի էթնոնկարագիր է ձեռք բերել միայն 1830 թ. արևմտահայերի գաղթից հետո: Այս տեսանկյունից կարևոր է նաև այն հանգամանքը, որ հեղինակը հատուկ անդրադարձել է երկրամասի աշխարհագրական անունների խնդրին և ցույց տվել դրանց մեծամասնության հայկական ծագումը:

Ընթերցողը ամբողջական պատկերացում է կազմում օսմանյան լծի աղետաբեր հետևանքների, XIX դ. առաջին երեսնամյակի ռուս-թուրքական պատերազմների ընթացքում տեղի ունեցած ոչ հայանպաստ էթնոգործընթացների, տարածաշրջանի նկատմամբ ռուսական քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ:

Աշխատության երրորդ գլխում, որը վերաբերում է Ջավախքի ռուսական տիրապետության ժամանակաշրջանին՝ 1828–1917 թթ., լուսաբանվում են դավառում նոր վարչատարածքային համակարգի արմատավորման, արևմտահայության հաստատման, տնտեսական ու հոգևոր-եկեղեցական կյանքի աշխուժացման, անհամեմատ կայուն ժողովրդագրական իրավիճակի ստեղծման ու մշակութային զարթոնքի մանրամասները:

Առաջին անգամ հատուկ հետազոտության նյութ է դարձել XIX դ. վերջին և XX դ. սկզբին արևմտահայ ազատագրական շարժումներին Ջավախքահայության ակտիվ մասնակցության հարցը: Քննության են առնված գավառի կաթոլիկ հայությանը «վրացացնելու» վրաց ուղղափառ եկեղեցու

քաղաքականապես վտանգավոր նկրտումները, որոնք սկսվել են դեռևս 1860-ական թվականներից: Հեղինակն անդրադարձ է կատարել XIX դ. ընթացքում ցարական վարչաժողովրդադրական քաղաքականության, XX դ. սկզբից Անդրկովկասում ազգային-տարածքային նոր բաժանում մտցնելու վերաբերյալ քաղաքական քննարկումների, համաշխարհային պատերազմում գավառի սոցիալ-քաղաքական իրավիճակի հարցերին: Հիշյալ գլխի գլխավոր արժանիքներից մեկն էլ ռուսական տիրապետության ողջ շրջանում տեղի ունեցած հայանպաստ էթնիկ զարգացումների բացահայտումն է:

Չորրորդ գլխում ներկայացվում է 1917–1923 թթ. խռովահույզ տարիներին ջավախքահայության իսկական ոդիսականը՝ ցարական կարգերի տապալումից մինչև խորհրդային իշխանության սկզբնաշրջանը: Հեղինակը ցույց է տալիս Անդրկովկասի վարչատարածքային նոր համակարգի ստեղծման վերաբերյալ 1917 թ. ընթացքում հայ, վրաց և թաթար քաղաքական շրջանակներում սկսված քննարկումների, այդ հարցում ժամանակավոր կառավարության մոտեցումների ողջ բարդ ու հակասական գործընթացը, տարեվերջին Ախալքալաքի գավառում ստեղծված հայկական ինքնավար վիճակը: Հեղինակը քննության է առել 1918թ. գարնանը գավառում մի կողմից հայերի ու վրացիների, մյուս կողմից՝ մեսխեթցի թուրքերի միջև աճող թշնամության պայմաններում զանազան քաղաքական շրջանակների անհեռատես գործողությունները, առավել ևս՝ թուրքական ներխուժման նախօրյակին:

Արխիվային նորահայտ նյութի հիման վրա մանրամասնորեն քննարկված են 1918 թ. ապրիլին զորավար Անդրանիկի Ախալքալաքի գավառ շարժվելու, թուրքական ներխուժման, գավառի հայության ինքնապաշտպանության ու արտագաղթի, Բակուրիանի և Ծալկայի գաղթականներում ստեղծված անտանելի պայմանների, հայ փախստականների նկատմամբ մենշևիկյան Վրաստանի ղեկավարության անմարդկային մոտեցման և այլ հիմնահարցեր: Հատուկ հետազոտության նյութ է դարձել 1918 թ. վերջից Ախալքալաքի և Լոռու համար հայ-վրացական հակամարտության, այդ խնդրում անգլիական զորահրամանատարության հակահայ քաղաքականության թեման:

Հեղինակն արխիվային նոր նյութերի հիման վրա կարողացել է ներկայացնել Ջավախքի հիմնահարցի լուծման համար ստեղծված բարդ ու աննպաստ քաղաքական իրավիճակը 1920 թ. վերջին և 1921 թ. ընթացքում, որի արդյունքում Ախալքալաքի գավառը, հակառակ տեղի բնակչության ճնշող մեծամասնության՝ հայերի բնական ձգտումների, բոլշևիկյան կուսակցական մարմինների կամայական որոշումներով բռնակցվեց Խորհրդային Վրաստանին: Միաժամանակ ներկայացված են խորհրդահայ մի քանի գործիչների, մասնավորապես Ա. Մյասնիկյանի, Ա. Բեկզադյանի և Ա. Մռավյանի ջանքերը՝ Ջավախքը Հայաստանին միացնելու կամ Վրաստանի կազմում գոնե հայկական ազգային ինքնավարություն ստեղծելու ուղղությամբ:

Աշոտ Մելքոնյանի գիտական աշխատությունը նաև քաղաքական ողջամտության յուրահատուկ կոչ է: Հեղինակը գտնում է, որ հայ-վրացական վիճահարույց հարցերը երբեք չպետք է հիմք հանդիսանան քաղաքական առճակատման համար, որը կորստյան կմատնի բախտակից ժողովուրդներին:

Գիտակցելով արխիվային նյութի շրջանառման գիտաքաղաքական կարևորությունը՝ հեղինակը, Ջավախքի պատմության շարադրանքին զուգընթաց, ձեռնամուխ է եղել տարբեր արխիվներից քաղված մի շարք կարևոր փաստաթղթերի հրատարակմանը, որոնք վերաբերում են մասնավորապես 1918–1921 թթ. շրջադարձային ժամանակաշրջանի իրադարձություններին: Դրանք նոր լույս են սփռում 1918 թ. Ախալքալաքի գավառ թուրքական ներխուժման, գաղթականներում ախալքալաքցիների ողբերգական վիճակի, նրանց նկատմամբ վրացական իշխանությունների վարած քաղաքականության, հայ-վրացական միջպետական փոխհարաբերությունների և այլ հարցերի վրա:

Հեղինակը խորությամբ հետազոտել է ժամանակի մամուլը, ուր իրենց արտացո-

լումն են գտել XIX–XX դդ. Ջավախքի պատմության բազմապիսի խնդիրներ: Այս իմաստով առանձնահատուկ տեղ ունեն մասնավորապես «Մշակը», «Հորիզոնը», «Զանգը», «Աշխատավորը», «Հայաստանի աշխատավորը», Ախալցխայի «Շարժումը», Ախալքալաքի «Ջավախք» շաբաթաթերթը և այլն, որոնց նյութերն օգտագործված են ամենայն բարեխղճությամբ:

Անհրաժեշտ է շեշտել, որ չնայած գրքի վերնագրին՝ այն ավելի ընդգրկուն է և շոշափում է բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներ: Այն խիստ օգտակար է ինչպես Ջավախքի, այնպես էլ հարևան Ախալցխայի, Ասպինձայի, Ծալկայի և այլ գավառների, առհասարակ հայ-վրացական հարաբերությունների ու ողջ տարածաշրջանի պատմության ուսումնասիրության համար:

Աշխատանքը կշահեր, եթե ավելի հանգամանորեն ներկայացվեր գավառի սոցիալ-տնտեսական պատմությունը: Բայց այդ բացը, ինչպես աշխատության ներածության մեջ ընդգծել է հեղինակը, հավանաբար կլրացվի Ջավախքի սոցիալ-տնտեսական պատմությանը նվիրված առանձին ուսումնասիրության հրատարակմամբ:

Ա. Մելքոնյանն ընտրել է թեմայի բազմաքանակ ու բազմաբնույթ, հաճախ խճողված հարցերը քննարկելու և լուսաբանելու միանգամայն ճիշտ ու արդարացված եղանակ՝ պատմաքննական մեթոդը: Շնորհիվ լեզուների և առաջին հերթին վրացերենի իմացության, բոլոր անհրաժեշտ սկզբնաղբյուրների ու գրականության նյութը ներառելու և պատմագիտական հիմնավոր պատրաստվածության, Աշոտ Մելքոնյանը ստեղծել է բարձրարժեք ու մնայուն աշխատություն: Տեսական լավ պատրաստվածությունը, սլատմական աշխարհագրության և ժողովրդագրության հեղինակի մասնագիտական իմացությունները մեծապես նպաստել են հաջողված մենագրություն ստեղծելուն: Հաջողության գրավականներից մեկն էլ եղել է այն, որ հետազոտողը պատմական երկարատև ժամանակաշրջանում իրեն զբաղեցնող հիմնահարցերը քննարկել է Անդրկովկասի և Ռուսաստանի պատմության ընդհանուր հետնախորքի վրա: Մենագրության ընդհանրացումներն ու եզրահանգումները փաստագրված են ու համոզիչ:

Աշոտ Մելքոնյանի «Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին» մենագրությունը կարևոր ներդրում է պատմական Հայաստանի առանձին գավառների ամբողջական պատմության, ժողովրդագրության, հայ-վրացական հարաբերությունների ուսումնասիրության և առհասարակ պատմագիտության բնագավառում:

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ